ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

05.05.2017թ. | ժամը 15:00-16:00 | ՀՀ կառավարություն

Մասնակիցներ՝ **Բազմաշահառու խմբի անդամներ**

Նախագահող՝	Դավիթ Հարությունյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
	Կարեն Իսախանյան	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի տեղակալ
	Տիգրան Խաչատրյան	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ
	Դավիթ Անանյան	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
	Խաչիկ Հակոբյան	ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
	Վարդան Գևորգյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ
	Արմեն Ստեփանյան	«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի կայուն զարգացման գծով ավագ կառավարիչ
	Սոնա Այվազյան	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն
	Արթուր Գրիգորյան	«Էկոիրավունք» հասարակական կազմակերպության նախագահ
	Արթուր Համբարձումյան (ԲՇԽ ժամանակավոր անդամ)	«ՍիվիլՎոյս» հասարակական կազմակերպության խորհրդի անդամ
	Ինգա Զարաֆյան	«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության նախագահ
	Հարություն Մովսիսյան	Երևանի պետական համալսարանի Օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ, Կայուն զարգացման կենտրոնի փորձագետ

ՀՀ կառավարության աշխատակազմ

Լիլիա Շուշանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի ղեկավար
Լուսինե Թովմասյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ
Դավիթ Շինդյան	ՀՀ կառավարության աշխատակազմի «Հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության բարելավում» ծրագրի փորձագետ

Հյուրեր՝

Արտաշես Դավթյան	Մեծ Բրիտանիայի դեսպանատուն
Անահիտ Խաչատրյան	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն

Բացականեր՝

Պերճ Խաչատրյան	«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի իրավական աջակցության ծառայության պետ
Վահե Վարդանյան	«Գեոմայնինգ» ՍՊԸ-ի փոխտնօրեն
Արթուր Նիկողոսյան	«Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի խորհրդական

Արձանագրող՝ Լուսինե Թովմասյան

ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐ

1. ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի նիստի բացում

Դ.Հարությունյանը ողջունեց նիստի մասնակիցներին և ներկայացրեց նիստի օրակարգը՝ նշելով, որ նիստի նպատակն է՝ ամփոփել 2017 թվականի 1-ին եռամսյակը և ուրվագծել առաջիկա ամիսների աշխատանքները:

2. ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 1-ին եռամսյակի հաշվետվության հաստատում

Ներկայացվեց ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2017 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվության նախագիծը, որը նախապես տրամադրվել էր ԲՇԽ-ի անդամների կարծիքին: Եռամսյակային հաշվետվության մեջ ամփոփվել են 2017 թվականի հունվար-մարտ ամիսներին իրականցված աշխատանքները՝ համաձայն ՀՀ ԱՃԹՆ-ի 2017-2018թթ. աշխատանքային ծրագրով հաստատված միջոցառումների: Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային ծրագրով սահմանված մի շարք աշխատանքներ (միջոցառումներ), մասնավորապես, ՀՀ կառավարության կայքի ԱՃԹՆ-ի ենթաբաժնում տեղեկատվության տեղադրում, տեղեկատվական թերթիկների տպագրություն և տարածում, «Հրապարակում» հեռուստածրագրի «Թափանցիկ հանքարդյունաբերություն» հաղորդաշարի պատրաստում և հեռարձակում, Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի թեկնածու երկիր դառնալուն նվիրված միջոցառման անցկացում, մամուլի ասուլիսի կազմակերպում, սոցիալական ցանցերում ԱՃԹՆ-Հայաստանի էջերի ստեղծման ու վարման աշխատանքներ և այլն: Հաշվետու ժամանակահատվածում համագործակցություն է իրականացվել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության հետ, ինչպես նաև կազմակերպվել են հանդիպումներ գործընկեր միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնց ժամանակ քննարկվել են ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի իրականացմանն ուղղված համագործակցության ուղղությունները: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրմանն ուղղված մի շարք այլ/ընթացիկ աշխատանքներ: Մշակվել և ԲՇԽ-ի կողմից հաստատվել է ԱՃԹՆ-ի լոգոյի Հայաստանի ազգային տարբերակը:

ՀՀ ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների՝ 2017 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվության նախագիծը ներկայացվեց ԲՇԽ-ի հաստատմանը և **ընդունվեց** ԲՇԽ-ի ընդհանուր համաձայնությամբ (կոնսենսուսով):

3. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով հաստատված՝ մայիս-հուլիս ամիսներին իրականացվելիք աշխատանքների ժամանակացույցի քննարկում և հաստատում

Ներկայացվեց ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով հաստատված՝ մայիս-հուլիս ամիսներին իրականացվելիք աշխատանքների ժամանակացույցի նախագծով նախատեսվող միջոցառումների և աշխատանքների ցանկը՝ դրանց իրականացման ժամկետներով: Մասնավորապես, ժամանակացույցով առանձնացվել են ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության (scoping study) իրականացումը և ԱՃԹՆ-ի Հայաստանի զեկույցի տեխնիկական առաջադրանքի կազմումը, իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքները, հեռահաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքները: Եռամսյակային աշխատանքային ծրագրում ներառված են նաև ԱՃԹՆ-ի ներդրումն ապահովող ընթացիկ աշխատանքների իրականացումը, միջազգային համագործակցությունը, հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը:

Առաջարկվեց հեռահաղորդակցության ռազմավարությունը վերանվանել հաղորդակցության ռազմավարություն և առաջարկությունն ընդունվեց ԲՇԽ-ի կողմից:

Առաջարկվեց քննարկել պատասխանատու հանքարդյունաբերությանն ուղղված աշխատանքային խմբի(երի) ձևավորման նպատակահարմարությունը, քանի որ, հատկապես քաղաքացիական հասարակության կողմից, կարևորվում է պատասխանատու հանքարդյունաբերության մշակույթի ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացումը հանքարդյունաբերության ռազմավարության մշակման, փորձաքննությունների իրականացման աշխատանքների բարելավման, ինչպես նաև ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի շրջանակներում: **Նշվեց**, որ պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրմանն ուղղված միջոցառումների իրականացման աշխատանքային խմբի(երի) ձևավորման հարցը ԲՇԽ-ն կարող է քննարկել 2017թ. 3-րդ և 4-րդ եռամսյակների ժամանակացույցը հաստատելիս՝ համաձայն ԱՃԹՆ-ի 2017-

2018թթ. աշխատանքային ծրագրի: Առաջիկա եռամսյակում այդ ուղղությամբ աշխատանքներ կտարվեն իրավական դաշտի վերլուծության աշխատանքային խմբի կողմից, քանի որ այդ վերլուծությունը, բացի ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրմանը վերաբերող հարցերից, կանդրադառնա նաև ոլորտին առնչվող այլ իրավական հարցերի:

Ներկայացվեցին Բրիտանական դեսպանատան աջակցությամբ իրականացվելիք աշխատանքները՝ համաձայն դեսպանատան կողմից մշակված ծրագրային փաթեթի: Նշվեց, որ ծրագրի իրականացման համար հայտարարված է եղել բաց մրցույթ և ծրագիրն իրականացնելու համար ընտրվել է Հայաստանի ամերիկյան համալսարանը: Ծրագրի ուղղություններն արդեն ամբողջականացվել են, որոնք են՝ ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրությունը (scoping study) և ԱՃԹՆ-ի Հայաստանի զեկույցի կազմման անկախ ադմինիստրատորի տեխնիկական առաջադրանքի նախագծի մշակումը (ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրի միջոցառումների 50 և 51 կետեր), օրենսդրական դաշտի համապատասխանության ուսումնասիրությունը, որում պիտի բացահայտվեն և վեր հանվեն Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրմանը խոչընդոտող բացերն ու միջազգային լավագույն փորձի հիման վրա ներկայացվեն այդ բացերի վերացմանն ուղղված առաջարկություններ, ինչպես նաև հնարավորության սահմաններում անդրադարձ կատարվի ոլորտին առնչվող այլ իրավական հարցերի: Ծրագրի երրորդ և չորրորդ ուղղություններն են՝ հաղորդակցության ռազմավարութան մշակման և հանրային իրազեկման միջոցառումների իրականացման աշխատանքները, լրագրողների և հասարակական կազմակերպությունների վերապատրաստումը:

Տեղեկացվեց, որ մինչև մայիս ամսվա ավարտը պետք է ներկայացվեն և ԲՇԽ-ի կողմից հաստատվեն խորհրդատվական կազմակերպության կողմից իրականացվելիք աշխատանքների հստակ շրջանակներն ու ժամանակացույցը:

Հայտարարվեց, որ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը ներկայումս իրականացնում է հանքարդյունաբերության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի գնահատում, որը հիմնականում ուղղված է մետաղական հանքավայրերի ուսումնասիրության և շահագործման թույլտվությունների տրամադրման գործընթացներին. դրա շրջանակներում նույնպես կներկայացվեն օրենսդրական դաշտի բարելավման առաջարկություններ:

4. ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով հաստատված միջոցառումների իրականացման նպատակով ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հաստատում

ԲՇԽ-ի խմբակցություններին **առաջարկվեց** ներկայացնել աշխատանքային խմբերի անդամների թեկնածությունը և հաստատել աշխատանքային խմբերի կազմերը:

Հայտարարվեց, որ աշխատանքային խմբերում կարող են ընդգրկվել նաև անկախ փորձագետներ և ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող խմբակցությունը հայտնեց, որ մինչև մայիսի 10-ը կներկայացնի անկախ փորձագետների թեկնածություն:

Արդյունահանող կազմակերպությունների խմբակցությունը ներկայացնող ԲՇԽ-ի անդամը **հայտարարեց,** որ նախքան նիստը խմբակցության նիստից բացակայող անդամների հետ քննարկվել են նիստի օրակարգի հարցերը և նա ներկայացում է նաև խմբակցության մյուս անդամների կարծիքը քննարկվող հարցերի վերաբերյալ:

Քննարկվեց իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման միջգերատեսչական աշխատանքային խմբի ստեղծման անհրաժեշտության հարցը: **Որոշվեց՝** աշխատանքների իրականացման ընթացքում պարզել նպատակահարմարությունը կա՛մ նման խմբի ստեղծման, կամ գործընկերային եղանակով ՀՀ արդարադատության նախարարության կուտակած փորձից օգտվելու առումով և ԲՇ-ի նախագահին ներկայացնել համապատասխան առաջարկություն::

ԲՇԽ-ի խմբակցությունները **ներկայացրեցին** աշխատանքային խմբերի իրենց անդամների թեկնածությունը:

- **Հաղորդակցության ռազմավարության մշակման աշխատանքային խմբի անդամներ.**

Տեղեկացվեց, որ հանրային հաղորդակցության մշակման նպատակով արդեն իսկ կազմվել է աշխատանքային խումբ, որը ներկայումս զբաղվում է ռազմավարության մշակման աշխատանքներով: ԲՇԽ-ի խմբակցությունները ներկայացրեցին աշխատանքային խմբի անդամների թենածուներին:

Խաչիկ Հակոբյան

Վահե Վարդանյան

Ինգա Զարաֆյան

Աննա Սաղաբալյան (անկախ փորձագետ)

- **Իրական սեփականատերերի ճանապարհային քարտեզի մշակման աշխատանքային խմբի անդամներ**

Դավիթ Անանյան

Վարդան Գևորգյան

Արմեն Ստեփանյան

Արթուր Նիկողոսյան

Սոնա Այվազյան

- **ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության (scoping study) աշխատանքային խմբի անդամներ**

Տիգրան Խաչատրյան

Կարեն Իսախանյան

Արմեն Ստեփանյան

Հարություն Մովսիսյան

Արթուր Գրիգորյան

- **Օրենսդրական դաշտի ուսումնասիրության և անհամապատասխանությունների բացահայտման աշխատանքային խմբի անդամներ**

Դավիթ Անանյան

Վարդան Գևորգյան

Պերճ Խաչատրյան

Արթուր Համբարձումյան

5. ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների այց, ԲՇԽ-ի վերապատրաստման անցկացում

Հայտարարվեց, որ ս.թ. հունիսի 6-7-ը նախատեսվում է ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուի կողմից իրականացնել ԲՇԽ-ի և ԱՃԹՆ-ի թիմի անդամների վերապատրաստում՝ իրական սեփականատերերի բացահայտման և

ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության (scoping study) թեմաներով: Կարող են անցկացվել նաև հանդիպումներ ԲՇԽ-ի առանձին խմբակցությունների հետ:

6. ԲՇԽ-ի անդամների կողմից բարձրացված այլ հարցերի քննարկում

ԲՇԽ-ի անդամներին **ներկայացվեց**, ՀՀ աշխատակազմի ԱՃԹՆ-ի փորձագետ Դավիթ Շինդյանը:

Հայտարարվեց, որ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակությունը ներկայացնող խմբակցությունը, համաձայն ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի աշխատակարգի, մինչև մայիսի 21-ը պետք է ներկայացնի խմբակցությունը ներկայացնող նոր մշտական անդամի և այլընտրանքային անդամի թեկնածությունը:

Առաջարկվեց մշակել և հաստատել ԱՃԹՆ-ի ասոցիացիայի վարվեցողության կանոններին համապատասխանող ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի վարվեցողության կանոններ: **Հանձնարարվեց** մայիս-հուլիս ամիսներին իրականացվելիք աշխատանքների ժամանակացույցում ներառել ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի վարվեցողության կանոնների մշակման աշխատանքային խմբի ստեղծման, խմբի կողմից վարվեցողության կանոնների և շահերի բախման հայտարարության ձևի մշակման ու ԲՇԽ-ի կողմից դրանց հաստատման միջոցառումները: Այս աշխատանքները պետք է իրականացվեն հունիս ամսվա ընթացքում՝ ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից խորհրդատվություն ստանալուց հետո: Կանոնների հաստատումից հետո ԲՇԽ-ի բոլոր անդամները պետք է ներկայացնեն հայտարարություն շահերի բախման վերաբերյալ: